ՇԵՄԱՐԱՆ
LYCEUM

Հայոց պատմության լեզվով

Հրապարակով և Ֆիշյոր գորգամեջով

ROUND SQUARE

CIS MEMBER

Այսօր առավել քան երբևէ չափազանց կարևոր է յուրաքնչյուրիս ներդրումը, քանի որ քաղաքական ու պատմական այս ծանր հեղաբեկումների շրջանում շարունակաբար ոտնձգություններ են արվում մեր երկրի սահմանների, մեր լեզվի, մեր ինքնության, մեր լինելիության դեմ: Դարեր շարունակ հային հայ են պահել իր լեզուն ու մշակութային գանձերը՝ դառնալով ազգի ինքնության առհավատչյան:

«Իր մայրենի լեզուն վատ իմացողը կեսա մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տատանվում է ամեն մի պատահական քամուց»:

(Արտեմ Ղորյան)

Ուրեմն՝ եկե՛ք ամուր կանգնենք հողին, կառչենք մեր ոսկեղենիկ մայրենի լեզվից՝ չվախենալով անգամ փոթորիկներից: Իհարկե, ողջունելի է բազում օտար լեզուների տիրապետելը, բայց մենք՝ որպես հայ, պետք է հիշենք, որ մայրենի լեզուն մեր էությունն է, մեր ինքնությունն է, ինքներս մեզ իրացնելու հիմնական միջոցը:
Ազգային արժանապատվության վեհ ու ազնիվ զգացումով մղված՝ եկե՛ք անաղարտ պահենք մեր մայրենին, խոսենք միայն ու միայն մաքրամաքուր հայերենով...

Բանասիրական գիտությունների
թեկնածու
հայոց լեզվի և գրականության
ամբիոնի դեկավար

Վենի Մակինյան

Մաս 1

Բառապտղաժամկան սրտակներ

Երախտիք - երախտագիտություն

երախտիք - բարի վաստակ, ավանդ /գիտության, մշակույթի և այլ բնագավառում/
երախտագիտություն - շնորհակալություն, երախտապարտություն, շնորհապարտություն

Օրինակ՝ Մենք **երախտագիտությամբ** ենք հիշում բոլոր նրանց, ովքեր հայկական մշակույթը աշխարհին ներկայացնելու գործում մեծ **երախտիք** ունեն:

Տարելից - տարեդարձ

Տարելիցը մահվան, աղետի, ցեղասպանության և այլ տխրառիթ իրադարձությունների համար է կիրառվում:
Տարեդարձը ծննդյան, հիմնադրման, հաղթանակի և ուրախառիթ իրադարձությունների համար է կիրառվում:

Օրինակ՝ Դպրոցի հիմնադրման **տարեդարձի** միջոցառումը հետաձգվեց, քանի որ այն համընկնում էր պատերազմի 3-րդ **տարելիցին:**

Վերաբերել - վերաբերվել

Վերաբերել - առնչվել, ինչ - որ բանի մասին լինել
Վերաբերվել - վարվել

Օրինակ՝ Այդ նկատողությունը չէր **վերաբերում** այն մարդկանց, որոնք պատասխանատվությամբ էին **վերաբերվում** սահմանված արժեքներին:

Մեղանչել - մեղա գալ

մեղանչել - մեղք գործել
մեղա գալ - զղջալ, փոշմանել

Օրինակ՝ Շատ անգամ էր **մեղանչել** ճշմարտության դեմ, բայց երբեմն էր միայն սրտանց **մեղա եկել** գործած սխալի համար:

Հրավեր - հրավերք

Հրավերը մի ինչ-որ համատեղ գործողության, խնջույքի հրավիրելն է:
Հրավերքը ուրախությունը, խնջույքը կամ ճաշկերույթն է, որին մասնակցում են հրավիրյալները:

Օրինակ՝ Նա շատ անգամ էր գիտաժողովների մասնակցելու **հրավեր** ստացել, բայց դրանցից հետո կազմակերպվող **հրավերքին** առաջին անգամ էր մասնակցում:

Քառյակ - քառատող

Քառյակը բանաստեղծության տեսակ է, որը չորս տողից բաղկացած խոհափիլիսոփայական ամբողջական ստեղծագործություն է:
Քառատողը չափածո ստեղծագործության չորս տողից բաղկացած մասն է, տունը:

Օրինակ՝ Թումանյանը այդ թեմային անդրադարձել է իր նշանավոր «Բերանն արնոտ մարդակերը էն անբան» **քառյակում** և «Հոգեհանգիստ» բանաստեղծության վերջին **քառատողում:**

Տեղի տալ - տեղիք տալ

Տեղի տալ - զիջել, նահանջել, ընկրկել
Տեղիք տալ - առիթ տալ, պատճառ դառնալ

Օրինակ՝ Ընկերների տարաձայնությունները հաճախ վեճերի **տեղիք էին տալիս**, քանի որ նրանցից ոչ մեկը **տեղի չէր տալիս**:

Պատրաստակամություն - պատրաստականություն

Պատրաստակամությունը որևէ բան անելու ցանկություն, կամեցողություն ունենալն է, պատրաստակամ լինելն է
Պատրաստականությունը պատրաստ /պատրաստված լինելն է, ինչ-որ բան անելու համար անհրաժեշտ պատրաստություն՝ գիտելիքներ կամ հմտություններ ունենալն է

Օրինակ՝ Հայաստանի՝ ֆուտբոլի ազգային հավաքականը հաղթելու մեծ **պատրաստակամությամբ** մտավ խաղադաշտ, սակայն անբավարար **պատրաստականության** պատճառով պարտվեց:

Պաշտոնական - պաշտոնական

Պաշտոնական - պաշտոնի պահանջով կատարված, ոչ մտերմիկ, օտար բառով՝ օֆիցիալ (լինում են բանակցությունները, հանդիպումները, որոշումները, հայտարարություններն ու հաղորդագրությունները, կարգադրությունները, խոսքը)
Պաշտոնական - պաշտոնյային վերաբերող, նրա հետ կապված (պաշտոնական դիրք, իրավունք, պարտականություն)

Օրինակ՝ **Պաշտոնական** հանդիպման ժամանակ քննարկեցին **պաշտոնական** դիրքի չարաշահման տարբեր երևույթներ:

Ծրագրել - ծրագրավորել

Ծրագրել - մտադրվել, ծրագիր կազմել, նպատակադրվել (օտար բառով՝ պլանավորել)
Ծրագրավորել - համակարգչային տեխնիկայի հետ է կապված և նշանակում է համակարգչի համար ծրագիր կազմել, իբրև ծրագիր համակարգչի մեջ մուծել և այլն:

Օրինակ՝ Նա **ծրագրել** էր **ծրագրավորել** նոր հավելված դպրոցականների համար:

Հազվագյուտ - հազվադեպ

Հազվագյուտ - նշանակում է հազիվ՝ դժվար ճարվող (հազվագյուտ կարող է լինել ձիրքը, տաղանդը, գիրքը և այլն)
Հազվադեպ - նշանակում է քիչ հանդիպող, սակավադեպ (հազվադեպ լինում է երևույթը, իրողությունը, սխալը և այլն)

Հազվագյուտ բառը ածական է, լրացնում է գոյականին
Հազվադեպ բառը մակբայ է, լրացնում է բային

Օրինակ՝ **Հազվադեպ** են հանդիպում նման **հազվագյուտ** տաղանդի տեր մարդիկ, ինչպիսիք են՝ Արամ Խաչատրյանը, Վիկտոր Համբարձումյանը և այլք:

Կենսաբանության դասը նվիրված էր **հազվադեպ** հանդիպող **հազվագյուտ** թռչունի բացահայտմանը;

Ձգտում - Նկրտում

Ձգտում - ձգտել բայը ունի թե՛ դրական, թե՛ բացասական նշանակություն (ձգտել ինչ - որ բանի հասնելու)
Նկրտում - գործածվում է միայն բացասական երանգով համատեքստում (նկրտել տիրանալու պաշտոնի, աթոռի, ուրիշի ունեցվածքի և այլն)

Օրինակ՝ Մոր՝ որդու ապագայի հետ կապված **ձգտումները** ի չիք դարձան որդու՝ շարունակ աթոռին տիրանալու **նկրտումների** պատճառով:

Պաշտպանել-պահպանել

Պաշտպանել - որոշակի վիճակում, դրության մեջ պահել անվնաս: Պաշտպանել-ը ինչ-որ վտանգի առկայություն է ենթադրում /պաշտպանել տունը, հայրենիքը, երեխաների իրավունքները և այլն/
Պահպանել - խնամքով պահել: Գործածում ենք այն դեպքում, երբ առկա է ուշադիր լինելու, գիտակից մոտենալու, խնամքով վերաբերվելու հանգամանքը /պահպանել ավանդույթը, հիշատակը, բարոյական արժեքները, լռությունը և այլն/

Օրինակ՝ Պետք է սրբորեն **պահպանել** արյան գնով **պաշտպանված** հայրենիքի հոգևոր գանձերը:

Տնօրինություն - տնօրենություն

Տնօրինություն - տնօրինելու, վերահսկելու իրավունք, իրավասություն
Տնօրենություն - ղեկավարություն, տեսչություն

Օրինակ՝ Ուսումնական նոր ծրագրեր կազմելու **տնօրինությունը** թողնվել է դպրոցի **տնօրենությանը:**

Ավանդույթ - ավանդություն

Ավանդույթ - սովորույթ, ընդունված կարգ (օտար բառով՝ տրադիցիա)
Ավանդություն - ավանդազրույց, պատմություն, հնից եկած զրուցապատում

Օրինակ՝ Ըստ ժողովրդական **ավանդության՝** հայերն ունեն բազմաթիվ **ավանդույթներ,** որոնցից մեկն էլ Բարեկենդանի տոնին ճոխ և առատ սեղան պատրաստելն է:

Տարբերել - տարբերակել

Տարբերելը - տարբերությունը տեսնելը կամ ճանաչելն է: Մարդը **տարբերում** է սևն ու սպիտակը, չարն ու բարին...
Տարբերակելը - երևույթների, հասկացությունների և այլն միջև եղած տարբերությունները սահմանել - հաստատելն է, տարորոշելը:

Օրինակ՝ Դեղագետի աշակերտը դեռ չէր **տարբերում** խոտաբույսերը, ուստի չկարողացավ **տարբերակել** անհրաժեշտները:

Չափ - չափս

Չափը շատ հին ժամանակներից եկող բառ է, այն չափման միավոր է, որևէ բանի ընդունված սահմանը:
Չափսը որևէ բանի **չափերը** որոշող տվյալների ամբողջությունն է: Ծինության, կոշիկի, հագուստի **չափս** է լինում, դրանց **չափսն** են վերցնում կամ որոշում:

Օրինակ՝ Դերձակը վերցրել էր բոլոր **չափսերը,** սակայն իր ունեցած կտորի **չափը** բավական չէր:

Հաղթել - հաղթահարել

Հաղթել հաղթանակ տանել, պարտության մատնել է նշանակում, գործածվում է ռմ կամ ինչի՞ն հարցերին պատասխանող բառերի հետ:
Հաղթահարելը մի արգելք, մի խոչընդոտ և այլն վերացնելու իմաստով է գործածվում և սովորաբար ի՞նչ հարցին պատասխանող լրացում է պահանջում:

Օրինակ՝ **Հաղթահարելով** փորձությունները՝ մարզիկը **հաղթեց** բոլոր մրցակիցներին:

Հնար - հնարք - հնարանք

Հնար - ճար, միջոց /դժվար վիճակից դուրս գալու հնար, հիվանդին բուժելու հնար և այլն/
Հնարք - հոմանիշ է հնար բառին, բայց ավելի հաճախ գործածվում է «ճարպկորեն կամ խորամանկությամբ բանեցված հնար» իմաստով /
Հնարանք - ը մտածված ու գտնված բանն է /արտադրությունը խթանելու, բարդ խնդիրներ լուծելու հնարանք:
Օրինակ՝ Փորձառու ճարտարագետը գտավ **հնարը՝** ստեղծված վթարային իրավիճակը կանխելու և նոր **հնարանքներ** ներկայացրեց՝ աշխատանքն անխափան շարունակելու համար, իսկ վթարի մեղավորի գործի դրած բոլոր **հնարքները՝** պատասխանատվությունից խուսափելու համար, զուր անցան:

Զերծ - զուրկ

Սրանք հոմանիշ բառեր են, որոնք կիրառությամբ տարբերվում են: Երկուսն էլ նշանակում են «մի բան չունեցող»
Զերծ - ը բացասական բանից հեռու լինելու իմաստով է գործածվում, **զուրկ** - ը՝ դրական մի բան չունենալու:
Օրինակ՝ Չնայած այն հանգամանքին, որ **զուրկ** է տարրական հասկացողությունից, կարողացել է **զերծ** մնալ ամեն տեսակի խարդավանքներից:

Ըստ որի - ըստ որում

Ըստ որի - ն նշանակում է «որի համաձայն»
Ըստ որում - ը հոմանիշ է ընդսմին բառին և նշանակում է «բացի սրանից, սրա հետ միասին, միաժամանակ»
Օրինակ՝ Ազգային ժողովն օրենք է ընդունել, **ըստ որի՝** հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում գրական հայերենի գործածությունը պարտադիր է, **ըստ որում՝** լեզվի մասին այդ օրենքին պարտավոր են ենթարկվել հանրապետության բոլոր հիմնարկ - ձեռնարկությունները, կազմակերպությունները և այլն:

Թոթովել - թոթվել

Թոթովել - անվարժ, կցկտուր խոսել, կմկմալ
Թոթվել - թեթևակիորեն ցնցել, շարժել, թափ տալ /ուսերը թոթվել/

Տղան, չիմանալով՝ ինչ պատասխանի, **թոթվեց** ուսերը, ապա մանկական անվարժ լեզվով **թոթովեց** մի քանի բառ:

Հավակնոտ - հավակնորդ

Հավակնոտ - անարժան, սակայն իրեն մեծամեծ արժանիքներ վերագրող, որևէ բանի հավակնող, ձգտող անձնավորություն
Հավակնորդ - օրինական և ըստ արժանվույն որևէ բանի հավակնող, ձգտող անձնավորություն

Նա իր **հավակնոտ** բնավորությամբ առաջիկայում դժվար թե դառնա առաջնորդի **հավակնորդ:**

Բարդություն - բարդույթ

Բարդություն - դժվարություն, անհասկանալիություն, բարդ լինելը
Բարդույթ - սեփական ուժերի ու կարողությունների նկատմամբ ունեցած ներքին անվստահություն, կաշկանդվածություն, օտար բառով՝ կոմպլեքս

Լավ կլինի՝ ազատվենք **բարդույթներից**, որպեսզի ավելորդ **բարդությունների** չհանդիպենք կյանքում:

Հովար - հովիար

Այս երկու բառերն էլ հով բառարմատից են կազմված
Հովար - ը հով՝ ստվեր անելու համար գլխարկի ճակատակողմից առաջ ձգվող մասն է /օտար բառով՝ կեպի/
Հովիար - ը հով անելու ձեռքի փոքրիկ հարմարանքն է /օտար բառով՝ веер/

Օրինակ՝ Կինը **հովարով** գլխարկ էր դրել, բայց սաստիկ շոգի պատճառով **հովիար** էր օգտագործում:

Վերահաս - վերահասու

Վերահաս - ը նշանակում է տագնապալիորեն վրա եկող, սպառնացող, մոտալուտ
Վերահասու - ն լավատեղյակ, գիտակ, մի բանի մասին անհրաժեշտ տեղեկություններ իմացողը, նաև՝ մի բանի ուշադրությամբ հետևողն է

Օրինակ՝ Արքան **վերահասու** էր քաղաքում տարածվող լուրերին, սակայն **վերահաս** աղետը կանգնեցնելու որևէ միջոց չէր գտնում:

Կազմակերպական - կազմակերպչական

Կազմակերպական - նշանակում է կազմակերպությանը կամ կազմակերպմանը վերաբերող
Կազմակերպչական - նշանակում է կազմակերպչի գործին վերաբերող

Օրինակ՝ Երիտասարդի **կազմակերպչական** հմտությունները մեծապես նպաստեցին միջոցառման **կազմակերպական** հարցերի լուծմանը:

Տանտեր - տանուտեր

Տանտեր - ը տան կամ ընտանիքի գլխավորն է, ռուս. բառով՝ хозяин-ը
Տանուտեր - ը պատմության գիրկն անցած հասկացություն է, մոտավորապես հոմանիշ է գյուղապետին

Օրինակ՝ Խստապահանջ **տանուտերը** հրամայեց սկսել տարեկան հարկահավաքը, մինչդեռ **տանտերերը** չէին կարողանում ապահովել իրենց ընտանիքների առաջնային կարիքները:

Մղել - դրդել

Մղել - ը գործածվում է թե՛ դրական, թե՛ բացասական երանգներով, նշանակում է ուժի միջոցով մի բան տեղից շարժել, հրել, տրամադրել /մղել լավ կամ վատ արարքի/
Դրդել - ը հոմանիշ է մղել բային, սակայն գործածվում է բացասական երանգով/ դրդել վատ արարքի, դավաճանության, սպանության և այլն

Օրինակ՝ Որքան էլ վեհ գաղափարները նրան առաջ էին **մղում՝** բարին արարելու, հարստություն կուտակելու մոլուցքը **դրդում** էր անպարկեշտ գործողությունների:

Տպել - տպագրել

Տպել - ը որևէ փաստաթուղթ կամ տեքստ տպելն է համակարգչի, տպիչ սարքի օգնությամբ:
Տպագրել - ը անպայման ենթադրում է տպել - ով հրատարակելը որևէ հրատարակչության կողմից:

Օրինակ՝ Քանի որ գիրքը **տպագրվել** էր սահմանափակ տպաքանակով, ընթերցողները ստիպված եղան առանձին էջեր **տպելու** և ընթերցելու:

Հառել - հառնել

Հառել - կենտրոնացած, սևեռած նայել
Հառնել - բարձրանալ, վեր ելնել, վեր խոյանալ, վերակենդանանալ

Օրինակ՝ Ներկաները երկար ժամանակ հայացքները **հառել** էին Մ. Սարյանի հայտնի «Հայաստան» կտավին, որից **հառնում** էր հայկական չքնաղ բնաշխարհը:

Ցուցում - ցուցմունք

ցուցում - հրահանգ, պարզաբանում, առաջադրանք՝ այսպես կամ այնպես վարվելու մասին
ցուցմունք - իրավաբանական եզրույթ է, նշանակում է վկաների, մեղադրյալի և այլոց՝ դատարանում տված բացատրությունների ու տեղեկությունների ամբողջությունը

Օրինակ՝ Հաշվի առնելով ոստիկանի **ցուցումները՝** նա ներկայացրեց իր **ցուցմունքը:**

Վերաբերյալ - վերոբերյալ

վերաբերյալ - որևէ բանի կամ մեկի մասին, վերաբերող
վերոբերյալ - վերևում բերված, նախորդ տողում բերված, քիչ առաջ ասված

Օրինակ՝ Բացի **վերոբերյալ** կետերից՝ տվյալ խնդրի **վերաբերյալ** այլ դիտարկումներ չկային:

Հասկացություն - հասկացողություն

Հասկացություն - նշանակում է գաղափար, ըմբռնում
Հասկացողություն - նշանակում է ըմբռնելու կարողություն, ըմբռնողություն

Օրինակ՝ Որքան էլ փայլուն **հասկացողություն** ուներ, միևնույնն է, նրա համար դժվար էր ընկալել քաղաքագիտական այդ բարդ **հասկացությունը**:

Ոգևորել - ոգեկոչել

ոգևորել - նշանակում է քաջալերել, սիրտ տալ, ոգեշնչել
ոգեկոչել - նշանակում է անցած՝ հիշատակելի հոգիներին կանչել, վկայակոչել

Օրինակ՝ Օտարազգի հայագետը հայկական մշակույթը ներկայացնելիս **ոգևորվել** էր և շարունակ **ոգեկոչում** էր Խորենացուն և Կոմիտասին:

Պատվեր - պատվիրան

պատվեր - նշանակում է որևէ բան պատրաստելու, արտադրելու, տրամադրելու հանձնարարություն /ռուս. բառով՝ заказ/
պատվիրան - նշանակում է պատգամ, հորդոր, խորհուրդ, խրատ

Օրինակ՝ Վարպետը յուրաքանչյուր **պատվեր** կատարելիս հիշում էր հոր **պատվիրանը՝** սիրով արված ցանկացած գործ հիանալի արդյունք է տալիս:

Ցուցաբերել - ցույց տալ

Ցուցաբերել - նշանակում է դրսևորել, ի հայտ բերել /ցուցաբերել հոգատարություն/
Ցույց տալ - նշանակում է մատնացույց անել /ցույց տալ ճանապարհը/

Օրինակ՝ Զինվորները վերջին մարտի ընթացքում **ցուցաբերեցին** հերոսություն՝ **ցույց տալով՝** իրական հայրենասիրությունը որն է:

Կերպար - կերպարանք

Կերպար - ը գրողի, դերասանի, արվեստագետի ստեղծած հերոսն է /օրինակ՝ գրողը ուրույն **կերպար** է կերտել/
Կերպարանք - ը պարզապես մարդու դեմքն է, արտաքին տեսքը

Օրինակ՝ Թեև հեղինակը հոր **կերպարանքը** աղոտ էր հիշում, սակայն նրա նոր ստեղծագործության մեջ ներկայացված գլխավոր **կերպարի** գրական նախատիպը հենց իր հայրն էր:

Հակոտնյա - հակամետ

Հակոտնյա - նշանակում է հակադիր, հակառակ, ներհակ, իրարամերժ
Հակամետ - նշանակում է հակված լինել, համաձայնել, կողմ լինել

Օրինակ՝ Չնայած իրենց **հակոտնյա** կարծիքներին՝ նրանք **հակամետ** էին առողջ հարաբերություններ պահպանելուն:

Աղանդ - աղանդեր

Աղանդ - տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող կրոնական ուսմունք
Աղանդեր - ճաշից հետո մատուցվող քաղցրավենիք, մրգեղեն/ռուս բառով՝ десерт/

Օրինակ՝ Ճաշից հետո տատիկը համեղ **աղանդեր** մատուցեց թոռնիկներին՝ միևնույն ժամանակ բացատրելով՝ ինչ է **աղանդը,** ինչպիսի բացասական հետևանքներ կարող է ունենալ և խարխլել պետության, եկեղեցու և հավատքի հիմքերը:

Ականակիտ - ականակիր

Ականակիտ - վճիտ, մաքուր (ջրի մասին), փայլփլուն, շողշողուն
Ականակիր - 1. Չափազանց մութ: 2. Ականներով զինված ռազմանավ

Օրինակ՝ **Ականակիր** խավարում փայլփլում էր **ականակիտ** աղբյուրի ջուրը՝ հայելու պես անդրադարձնելով երկնքի բյուրավոր աստղերը:

Ակութ - անութ

Ակութ - կերակուր եփելու օջախ
Անութ - թևատակի փոսը, թևատակ

Օրինակ՝ Ծերունին իջեցրեց **անութին** սեղմած փայտերի կույտը և թեժացրեց **ակութի** կրակը, որից անուշաբույր գոլորշի էր բարձրանում:

Անընստգյուտ - անստույգ

Անընստգյուտ - կատարյալ, անթերի
Անստույգ - չստուգված, ոչ հավաստի, անճիշտ

Օրինակ՝ Անհիմն և **անստույգ** տեղեկատվություն տարածելով՝ փորձում էին աղարտել(փչացնել, վնասել, արատավորել) նրա **անընստգյուտ** կերպարը:

Աշտարակ - աշտանակ

Աշտարակ - բարձր ու նեղ կառույց
Աշտանակ - ճրագակալ, մոմակալ

Օրինակ՝ Հեռվից երևում էին քաղաքամերձ **աշտարակի** բարձր պարիսպների զույգ **աշտանակները,** որոնք աղոտ լուսավորում էին շրջակայքը:

Ապիկար - ապիրատ

Ապիկար - անկարող, ապաշնորհ, անընդունակ
Ապիրատ - անիրավ, անարդար, անօրեն

Օրինակ՝ **Ապիկար** թագավորի **ապիրատ** ու անհիմն որոշումները կործանեցին երբեմնի հզոր բերդաքաղաքը:

Աստանդական - ասպնջական

Աստանդական - թափառական
Ասպնջական - հյուրասեր, հյուրընկալ

Օրինակ՝ Երկար դեգերումներից հետո հոգնած **աստանդականը** կանգ առավ գյուղի ամենատարեց մարդու **ասպնջական** օջախում:

Բամբիռ - բամբիշ

Բամբիռ - ժողովրդական հնագույն նվագարան
Բամբիշ - թագուհի, իշխանուհի

Օրինակ՝ Հիվանդ **բամբիշին** ոտքի կանգնեցրեց **բամբիռի** հոգեպարար մեղեդին:

Բրդել - բրթել

Բրդել - մանրացնել, մանր կտրատել, կտոր - կտոր անել
Բրթել - հրել

Օրինակ՝ Փոքրիկը միամիտ **բրթեց** և գցեց մածունով լի ափսեն, որի մեջ խնամքով հաց էր **բրդել**՝ կատվին կերակրելու համար:

Գիրթ - գիրգ

Գիրթ – կտրուկ, շեշտակի
Գիրգ – փափուկ, քնքուշ

Օրինակ՝ Իշխանուհին **գիրթ** շարժումով ազատվեց իր **գիրգ** մարմինը ձգող կաշվե գոտուց և խոր շունչ քաշեց:

Դեղձան - դերձան

Դեղձան – բաց դեղնագույն, խարտյաշ
Դերձան – կարի թել

Օրինակ՝ Տատիկը համապատասխան **դերձան** էր ընտրում իր **դեղձան** հյուսերով թոռնուհուն նոր հագուստ կարելու համար:

Թափոր - թափուր

Թափոր – որևէ տեղ ընթացող մարդկանց և մեքենաների բազմություն
Թափուր – դատարկ, ազատ, չզբաղեցրած

Օրինակ՝ Թաղման **թափորն** անտարբեր առաջ էր ընթանում՝ չմտածելով, որ այս աշխարհում ընդմիշտ **թափուր** մնաց մի լուսավոր մարդու տեղ:

Թոթովել - թոթվել

թոթովել – անվարժ, կցկտուր խոսել, կմկմալ
թոթվել – թեթևակիորեն ցնցել, շարժել, թափ տալ

Օրինակ՝ Կոտրված ափսեի ձայնից փոքրիկը հանկարծակիի եկավ, վախից սկսեց ինչ-որ բառեր **թոթովել** և նկատելով մոր հանդիմանական հայացքը՝ ուսերը **թոթվեց** ու փախավ սենյակից:

Թյուր - թույր

թյուր – սխալ, խոտոր, ծուռ
թույր – գույն, երանգ

Օրինակ՝ Նա **թյուր** կարծիք էր կազմել նորաթուխ բանաստեղծի մասին, որի ստեղծագործություններում առկա էին կյանքի բոլոր **թույրերն** ու բույրերը:

Կթղա - կխտար

կթղա – փոքրիկ բաժակ
կխտար – այծյամ, եղնիկ

Օրինակ՝ Ծերունին ճամպրուկից հանեց խնամքով պահված մի արծաթե **կթղա**, որի վրա նրբորեն փորագրված էին մեծ ու փոքր **կխտարներ:**

Կտրիճ - կտրիչ

կտրիճ – քաջ, խիզախ, արի
կտրիչ – հատիչ, կտրող հատված ունեցող գործիք

Օրինակ՝ Թագավորի **կտրիճ** զորականը անմիջապես առաջ նետվեց և ձեռքի հատու **կտրիչով** սկսեց վախեցնել թագավորական պահակախմբի ճանապարհը փակած գայլերի ոհմակին:

Հերկել - հերքել

հերկել – վարել, ակոսել, ցանելու համար հողը ճեղքել և շուռ տալ
հերքել – ժխտել, որևէ բանի հակառակը ապացուցել

Օրինակ՝ Գյուղացին փորձեց **հերքել** գյուղապետին և ապացուցել, որ հողը պետք է **հերկել** ոչ թե ուշ աշնանը, այլ վաղ գարնանը:

Հովատակ - հրովարտակ

հովատակ – արու ձի
հրովարտակ – թագավորի գրավոր դիմումը ժողովրդին

Օրինակ՝ Լուսաբացին ներկայացրին թագավորի **հրովարտակը,** ըստ որի՝ գյուղացիները պետք է տրամադրեին իրենց **հովատակները՝** որպես ամրակազմ ու դիմացկուն ձիեր՝ պատերազմի դաշտ ուղարկելու համար:

Մախաղ - մախաթ

մախաղ – փոքրիկ տոպրակ, պարկ, պայուսակ, որի մեջ լցնում են ուտելիքի պաշար
մախաթ – մեծ ասեղ

Օրինակ՝ **Մախաթը մախաղի** մեջ չես թաքցնի. այն անպայման կծակի ու դուրս կգա:

Մահիկ - մահիճ

մահիկ – կիսալուսին
մահիճ – անկողին

Օրինակ՝ Հիմանդը, **մահճում** պառկած, նայում էր հազիվ նշմարվող **մահիկին՝** անհամբեր սպասելով այգաբացին:

Մեղկ - մեղք

մեղկ – թուլամորթ, կամազուրկ, թուլակամ
մեղք – հանցանք, մեղավորություն

Օրինակ՝ Փափկակյաց ու **մեղկ** երիտասարդը նախկինում բազում **մեղքեր** էր գործել:

Մույթ–մույկ

մույթ – կամարակալ, սյուների հենարան, հենասյուն
մույկ – ոտնաման, կոշիկ

Օրինակ՝ Հին հունական ավերված տաճարի **մույթերին** յուրօրինակ կենդանու գլուխներ էին քանդակված, որոնք մոտիկից նայելիս նման էին հնամաշ **մույկերի:**

Նկանակ - ջնարակ

նկանակ – կլոր հաց, բլիթ, բաղարջ
ջնարակ – ապակեներկ, որով պատում են խեցեգործական առարկաները

Օրինակ՝ Ըստ ավանդազրույցի՝ Գրիգոր Լուսավորիչը Խոր վիրապում ողջ է մնացել մի ծեր կնոջ շնորհիվ, որն ամեն օր Գրիգորին էր փոխանցում թարմ թխված **նկանակ** և գորշ **ջնարակով** պատված թասով սառնորակ ջուր:

Ծաղափ–շառափ

շաղափ – անցքեր բացելու կտրող գործիք /օտար բառով՝ сверло/
շառափ – 1. փայլ, ցոլք, ճաճանչ, 2. հորդ, տեղատարափ անձրև

Օրինակ՝ Վարպետը **շաղափով** մեծ դժվարությամբ պատի վրա անցք բացեց, որից ներս թափանցող արևի ոսկեգույն **շառափը** փոքր – ինչ լուսավորեց մռայլ խուցը:

Ծեղբ - շեղջ

շեղբ – դանակի կտրող մասը
շեղջ – կույտ, կուտակ

Օրինակ՝ Ծերունին ձեռքը մտցրեց ցորենի **շեղջի** մեջ, որ կորցրած դանակը գտնի, և անզգուշության պատճառով դանակի **շեղբը** վնասեց ձեռքը:

Ոստան - ոստայն

ոստան – մայրաքաղաք
ոստայն – 1.ջուլհակի /կտորեղեն գործող արհեստավոր /գործած թելերի ցանց, 2. սարդոստայն

Օրինակ՝ Երկար դեգերումներից /թափառումներից/ հետո երտասարդը վերջապես վերադարձավ իր հարազատ **ոստան,** բացեց լքված տունը, որը ծնողների մահից հետո ոչ ոք ոտք չէր դրել, և առաջինը, որ նկատեց ամեն անկյունում խնամքով հյուսված սարդերի **ոստայնն** էր:

Պճնվել - պչրել

պճնվել – զարդարվել, զուգվել
պչրել – սեթևեթել, կոտրատվել

Օրինակ՝ Երտասարդ կինը, որ **պճնվել** էր տարաբնույթ զարդերով, ամանորյա տոնածառ էր հիշեցնում, միայն այն տարբերությամբ, որ շարունակ փորձում էր **պչրել** և ուշադրություն գրավել:

Սամում – սամույր

սամում – տաք ավազախառն քամի
սամույր – թանկարժեք մորթով կենդանի կզաքիսների ցեղից

Օրինակ՝ Հյուսիսից եկած բժիշկները կրում էին **սամույրի** մորթուց գորշ գույնի գլխարկներ, որոնք խորթ էին այդ տեղանքի բնակիչների համար, քանի որ աննախադեպ շոգի ու մոլեգնող **սամումի** պատճառով երբևիցե նմանատիպ գլխարկներ չէին կրել:

Սկահակ – ստահակ

սկահակ – գավաթ, բաժակ
ստահակ – ստոր, տականք, սինլքոր

Օրինակ՝ Մի ինքնակոչ **ստահակ,** թանգարանում հանդես գալով որպես էքսկուրսավար, փորձում էր յուրացնել յուրօրինակ զարդանախշերով արծաթե **սկահակը**, որը շուրջ հազար տարվա պատմություն ունի:

Վարկ – վարք – վարգ

վարկ – 1. հեղինակություն, պատիվ, 2. դրամական միջոց, փոխատվություն
վարք – պահվածք, կենցաղավարություն
վարգ – ձիերի համաչափ վազք, քայլք

Օրինակ՝ Դաշտի ձիերի հավասարաչափ **վարգը** երիտասարդ գյուղապետին հիշեցրեց իր անկանոն **վարքի** մասին, որի պատճառով **վարկն** ընկել էր համագյուղացիների շրջանում:

Մաս 2

Բառաշեմարան աղյուսներ

Սխալ է	Ճիշտ է
ութանասուն/ութանասունմեկ, ութանասուներկու, ութանասուներեք. . . . /	ութսուն=ութ+սուն(տասնյակ) /ութսունմեկ, ութսուներկու, ութսուներեք. . . . /, բայց՝ յոթանասուն
տաս	տասը կամ տասն
զերո, զերոյական	զրո, զրոյական
խորը	խոր
օրեկան	օրական
ամսեկան	ամսական, բայց՝ տարեկան

Սխալ է	Ճիշտ
համբյուր/համբյուրել	համբույր/համբուրել=համ/ածանց/+բույր/իրանական փոխառություն է
ողջյուն/ողջյունել	ողջույն/ողջունել=ողջ+ույն/ածանց/
թույլատվություն	թույլտվություն
վիրաբուժ/մանկաբուժ/հոգեբուժ	վիրաբույժ, մանկաբույժ, հոգեբույժ
ուխտադրույժ	ուխտադրուժ=ուխտ/երդում/+դրուժ/նենգություն/ իրանական փոխառություն է, նշանակում է երդմնազանց
Վայրկյանական, առօրյական	Վայրկեենական, առօրեական

Սխալ է	Ճիշտ է
Սունյակ/ աղուսյակ/պայուսյակ	Սյունաակ=սյուն+ակ/ աղյուսաակ=աղյուս(կավից պատրաստված քառակուսի շին. քար) +ակ/ պայուսաակ-պարզ բառ
ջղայն	ջղային=ջիղ(նյարդ) +ային
դաստիրակ	դաստիարակ (պարզ բառ, հունական փոխառություն)
գնհատել	գնաահատել=գին+ա+հատ+ել
ֆիդային	ֆիդայի (պարզ բառ, արաբական փոխառություն)
պատճե	պատճեն (պարզ բառ, իրանական փոխառություն)

Սխալ է	Ճիշտ է
տարեկետում	տարկետում=տար/տարբեր/+կետ նշանակում է տարբեր կետերի միջև, տարբեր ժամանակահատվածում արձակուրդ տալ: Ոչ մի կապ չունի տարի բառի հետ:
հոգեբարձու	հոգաաբարձու=հոգս+բարձել/վերցնել, կրել/ նշանակում է հոգ տանող, խնամակալ, հոգածու: Ոչ մի կապ չունի հոգի բառի հետ:
հաշվանդամ	հաշմանդամ=հաշմ/հաշմված, վնասված, խեղված/+անդամ նշանակում է անդամալույծ: Ոչ մի կապ չունի հաշվել բառի հետ:
հողարկավորություն	հուղարկավորություն=ի ուղի/«հ» նախդիրը ձայնավորից առաջ գրվել է «յ», որը կարդացվել է «հ»՝ հուղ/ +արկանել/գցել/, այսինքն՝ ճանապարհ գցել նշանակում է ննջեցյալին հողին հանձնելը, թաղում: Ոչ մի կապ չունի հող բառի հետ:
այլոք	այլք=այլ+ք նշանակում է այլեր, ուրիշներ
որոշներ	որոշ անորոշ դերանուն է, հոգնակի թվով չի գործածվում: Դրա փոխարեն կարելի է գործածել ոմանք, ուրիշները, որոշ մարդիկ և այլն:

Սխալ է	Ճիշտ է
հ օգուտ հ ուրախություն	հօգուտ հուրախություն—հ նախդիրը ձայնավորից առաջ դարձել է «յ», որն էլ փոխվել է «հ», օրինակ՝ հ անձին-յանձին-հանձին
հ նկատի ունենալ	նկատի ունենալ
հ շնորհիվ	շնորհիվ
հ զարմանք	հ զարմանս
մեծամասամբ	մեծ մասամբ
ըստ արժանավույն	ըստ արժանվույն
անբարյացկամ	անբարյացակամ
ձեռնատու	ձեռնտու

Սխալ է	Ճիշտ է
տուժվել	տուժել
քծնվել	քծնել
նախանձվել	նախանձել
վիճվել	վիճել
խաչակնքվել	խաչակնքել
խաբնվել	խաբվել
կապնվել	կապվել
անձեռնամխելի	անձեռնմխելի

Սխալ է	Ճիշտ է
ծիծաղացնել	ծիծաղել-ծիծաղեցնել
խոսացնել	խոսել-խոսեցնել
քնացնել	քնել-քնեցնել
փրփրացնել	փրփրել-փրփրեցնել
վազացնել	վազել-վազեցնել
մգեցնել	մգանալ-մգացնել
խոնավեցնել	խոնավանալ-խոնավացնել
դժվարեցնել	դժվարանալ-դժվարացնել

Սխալ է	Ճիշտ է
բացի ընտանիքը	բացի ընտանիքից
առանց հայրենիք	առանց հայրենիքի
ինչո՞ւ համար	ինչու // ինչի՞ համար
բացառությամբ ձեր դասարանից	բացառությամբ ձեր դասարանի
բազմիցս անգամ	բազմիցս կամ բազում անգամներ
երիցս անգամ	երիցս կամ եռակի
կրկին /կրկնակի/ անգամ	կրկին, կրկնակի
խստիվ կերպով	խստիվ, խստորեն
հնարավորինս չափով	հնարավորինս կամ հնարավորության չափով

Սխալ է	Ճիշտ է
ձեզանից յուրաքանչյուրդ	ձեզանից յուրաքանչյուրը կամ յուրաքանչյուրդ
ձեզանից ամեն մեկդ	ձեզանից ամեն մեկը կամ ամեն մեկդ
հայերեն լեզու, ռուսերեն լեզու	հայոց լեզու կամ հայերեն, ռուսաց լեզու կամ ռուսերեն
համար 10-րդ	համար 10 կամ 10-րդ
հանուն անկախության համար	հանուն անկախության կամ անկախության համար
առ այն մասին	առ այն կամ այն մասին

Մաս 3

Խնդրահամակարգային սխալներ

Սխալ է	Ճիշտ է
Բավարարել ինչին Այս ձևաչափը բավարարում է մրցույթի պահանջներին:	Բավարարել ինչը՞ Այս ձևաչափը բավարարում է մրցույթի պահանջները:
Դավաճանել ինչը Իր վախկոտության պատճառով նա դավաճանեց հայրենիքը:	Դավաճանել ո՞ւմ, ինչին Իր վախկոտության պատճառով նա դավաճանեց հայրենիքին:
Դավանել ինչի՞(ն) Այսօր շատերը դավանում են ապազգային գաղափարների:	Դավանել ինչ Այսօր շատերը դավանում են ապազգային գաղափարներ:
Խթանել ինչին Այդ ներդրումը խթանեց գյուղատնտեսության զարգացմանը:	Խթանել ինչը Այդ ներդրումը խթանեց գյուղատնտեսության զարգացումը:
Խոչընդոտել ինչին Մեծ տերությունները ամեն կերպ փորձում են խոչընդոտել փոքր պետությունների առաջընթացին:	Խոչընդոտել ինչը Մեծ տերությունները ամեն կերպ փորձում են խոչընդոտել փոքր պետությունների առաջընթացը:

Սխալ է	Ճիշտ է
Ծանոթանալ ինչի՞ հետ Ծանոթացանք քաղաքի հետ	Ծանոթանալ ինչի՞ն, ում հետ Մենք ծանոթացանք օտարերկրյա պատվիրակության հետ և միասին ծանոթացանք միջոցառման օրակարգին: ✓ Անձ ցույց տվող բառերի դեպքում կազմվում է հետ կապով /ծանոթացա վարպետի հետ/, ոչ անձ ցույց տվող բառերի դեպքում՝ առանց կապի /ծանոթացա քաղաքին, մշակույթին/:
Կտակել ո՞ւմ վրա Ունեցվածքը կտակել էր զավակների վրա:	Կտակել ո՞ւմ Ունեցվածքը կտակել էր զավակներին:
Համաձայնել ինչի՞ հետ Համաձայնեցի ընկերոջս առաջարկի հետ	Համաձայնել ում հետ, ինչի՞ն Համաձայնեցի ընկերոջս հետ Համաձայնեցի ընկերոջս առաջարկին: ✓ Ոչ անձ ցույց տվող բառերի դեպքում հետ կապը ավելորդ է:
Սատարել ինչի՞ն Նրանք սատարում էին բոլոր ազգաշահ նախաձեռնություններին:	Սատարել ո՞ւմ, ի՞նչը Նրանք սատարում էին ինձ և իմ բոլոր ազգաշահ նախաձեռնությունները:

Կապմեց բանաստեղծական գիրքերի թեկնածու
«Շիրակացու Ծնունդ» միջազգային գիրքկրթական
համալիրի հայոց լեզվի և գրականության
ամբիոնի ղեկավար

Անի Մակինյանը